ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անունը ազգանունը՝** Վահե Գրիգորյան
2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ կառավարության ենթակա միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի նախագահի տեղակալ
3. **Գործուղման վայրը/ժամկետը՝** Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2022 թ. ապրիլի 19-21
4. **Հրավիրող կողմը՝** ԱՊՀ մասնակից պետությունների ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման հարցերով հանձնաժողով
5. **Գործուղման նպատակը՝** Մասնակցել ԱՊՀ մասնակից պետությունների ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման հարցերով հանձնաժողովի շրջանակներում գործող ճառագայթային մոնիթորինգի աշխատանքային խմբի առաջին հանդիպմանը
6. **Քննարկված թեմաները – Հանդիպման ընթացքում քննարկվել են.**
   - ԱՊՀ մասնակից պետությունների միջև ճառագայթային մոնիթորինգի տեղեկատվության փոխանակման համաձայնագրի նախագծի վերաբերյալ առաջարկությունները:
   - ԱՊՀ մասնակից պետությունների միջև ճառագայթային մոնիթորինգի տեղեկատվության փոխանակման ծավալները և պայմանները:
   - ԱՊՀ մասնակից պետությունների միջև ճառագայթային մոնիթորինգի համատեղ համակարգի (տվյալների հասանելիության մասով) հնարավորությունը:
   - ԱՊՀ մասնակից պետությունների միջև ճառագայթային մոնիթորինգի տեղեկատվության փոխանակման համաձայնագրի նախագծի (այսուհետ՝ համաձայնագիր) համատեղ ընդունելի տարբերակը:
7. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր**

   ԱՊՀ մասնակից պետությունների ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման հարցերով հանձնաժողովի շրջանակներում գործող ճառագայթային մոնիթորինգի աշխատանքային խմբի առաջին հանդիպմանը քննարկվեցին համաձայնագրի նախագծի վերաբերյալ մասնակից պետությունների դիտողություններն ու առաջարկությունները:

   ՀՀ կողմից հատուկ ուշադրության հրավիրվեց ատոմային էլեկտրակայանի հսկման գոտում ճառագայթային մոնիթորինգի արդյունքները զգայուն տեղեկատվություն լինելու հանգամանքը:

   ՀՀ առաջարկությամբ քննարկվեց նաև փոխանակվող տեղեկատվությունը երրորդ կողմին փոխանցելու անհրաժեշտությունը, պայմանները և նպատակը: Քննարկվեցին նաև փոխանակվող տեղեկատվության ընդհանուր օգտագործման պորտալի ստեղծման և շահագործման, տեղեկատվության արխիվացման և բոլոր մասնակից պետություններին հասանելության հարցերը:

Ելույթով հանդես եկա ներկայացնելով ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի կողմից ՀՀ ճառագայթային մոնիթորինգի իրականացման գործընթացը:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Որոշվեց համաձայնագրի տեքստում կատարել լրացում, որ համաձայնագիրը չի տարածվում միջուկային տեղակայանքների հսկման գոտում իրականացվող ճառագայթային մոնիթորինգի չափման արդյունքների վրա:

Որոշվեց ճառագայթային մոնիթորինգի տեղեկատվության փոխանակման ծավալները և պայմանները հստակեցնել մշակվող աշխատակարգում:

Որոշվեց բացառել փոխանակված տեղեկատվությունը երրորդ կողմին փոխանցելու հնարավորությունը կամ հստակեցնել բացառությունները՝ օրինակ գիտական հոդվածներում օգտագործում և հրատարակում, որոնց դեպքում տեղեկատվության փոխանցումը ընդունելի կլինի համաձայնագրի կողմ հանդիսացող պետություններին:

Որոշվեց, վերանայել համաձայնագրի նախագիծը ներկայացված և քննարկված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա և վերանայված նախագիծը ներկայացնել աշխատանքային խմբի անդամների դիտարկմանը:

Աշխատանքային խմբի դիտարկումից, առաջարկությունների և դիտողությունների վերացումից (առկայության դեպքում) հետո ներկայացնել ԱՊՀ մասնակից պետություններին դիտարկման:

Հանդիպման արդյունքներն ամփոփվել են արձանագրությամբ, հանդիպման ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Շարունակել համաձայնագրի նախագծի մշակման աշխատանքները:

Համաձայնագրի հիման վրա տեղեկատվության փոխանակումը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետությանը տնօրինել ավելի լայն տարածքների ճառագայթային մոնիթորինգի տվյալների, որն իր հերթին հնարավորություն կտա մոդելավորել և կանխատեսել միջուկային և ճառագայթային վթարների (ՀՀ դուրս) դեպքում դրանց հետևանքների ազդեցությունը ՀՀ բնության և բնակչության վրա: Սույն հարցը առավել արդիական է դառնում ասիական, միջին ասիական և արաբական երկրների կողմից ԱԷԿ կառուցման պլանների օրեցօր ավելացման, ինչպես նաև ներկա ռազմաքաղաքական իրավիճակի պայմաններում:

Վահե Գրիգորյան
22/04/2022թ.